ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ջիարջի» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական՝ թիվ 273.110.1156506),

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ՝

Ռ. Եգանյանի (լիազորագիր՝ տրված 15.12.2021թ.),

Պ. Գաբրելյանի (լիազորագիր՝ տրված 15.12.2021թ.),

Տ. Միրզոյանի (լիազորագիր՝ տրված 15.12.2021թ.),

Ա. Հարությունյանի (լիազորագիր՝ տրված 15.12.2021թ.),

քննելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից

13.12.2021թ. ներկայացված (13.12.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ջիարջի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.12.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ հայտարարել է ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն:

24.11.2021թ-ին էլեկտրոնային փոստով ստանում ենք «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով գրություն, որում նշված չեն եղել որևէ անհամապատասխանության մասին և մասնակցին չի տեղեկացվել թե ինչ շտկումներ է պահանջում պատվիրատուն /կից ներկայացնում ենք/:

02.12.2021թ-ին «Չափաբաժնի մերժում» ծանուցումով տեղեկանում ենք, որ մեր հայտը ներկայացված բոլոր չափաբաժինների մասով մերժվել են՝ ներկայացնելով աբսուրդի հասնող մեկնաբանություններ:

Մեր կողմից ներկայացված ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում ներառված բազմաթիվ դեղեր մերժվել են գնահատող հանձնաժողովի կողմից, անհասկանալի պատճառներով:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ կետի՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Մասնավորապես՝ Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները, ինչը չի պահպանվել մեզ ուղարկած ծանուցման մեջ: Հետևաբար մասնակիցը նման պարագայում չի կարող ամբողջությամբ և հստակ ներկայացնել պատվիրատուի կողմից պահանջած շտկումները:

Նույն որոշման 15-րդ կետի համաձայն

15. Գնահատող հանձնաժողովի կազմում հանձնաժողովի անդամի կարգավիճակով չեն կարող ընդգրկվել գնումները համակարգողը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչը կամ աշխատակիցը: Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան: Ընդ որում, եթե պատվիրատուի աշխատակազմի ներկայացուցիչները չունեն անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով հրավիրվում է համապատասխան փորձագետ (մասնագետ):

Գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ-ի թիվ 3 արձանագրությունը հիմքեր են տալիս ենթադրելու, որ հանձնաժողովը իր կազմում չի ունեցել մասնագիտական կարողություններ ունեցող անդամ, որը հանգեցրել է մեր կազմակերպության համար լուրջ խնդիրների:

Ինչպես նաև հիմքեր տալիս կարծելու արդյոք արձանագրությունը կազմվել է սթափ, թե ոչ սթափ վիճակում:

Դա է վկայում նաև հանձնաժողովի կողմից անգործության ժամկետի հայտարարումը՝ Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ կետի

Հոդված 10. Պայմանագիր կնքելու մասին որոշումը, անգործության ժամկետը, պայմանագրի կնքումը և պայմանները

3. Մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է:

Պատվիրատուն թիվ 3 արձանագրությունը հրապարակել է դեկտեմբերի 2-ին, որից հետո միայն պետք է հայտարարեր անգործության ժամկետ: Մինչդեռ իր անգործության ժամկետի սկսելու մասին իր 02.12.2021թ-ի գրության մեջ անգործության ժամկետ է նշել նոյեմբերի 25-ին մինչև դեպտեմբերի 4-ը ընկած ժամանակահատվածը:

3. Բողոք ներկայացրած անձի պահանջ

Խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել պատվիրատուին չեղարկել 2021 թ-ի դեկտեմբերի 2-ի իր թիվ 3 արձանագրությունը:

Խնդրում ենք Ձեզ պարտավորեցնել պատվիրատուին այն բոլոր չափաբաժինների մասով, որոնց համար մեր կողմից ներկայացվել են նվազագույն գնային առաջարկ և որտեղ առկա է մեր կողմից հայտով ներկայացված և ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում ներառված դեղ, ընդունել որպես հրավերի պահանջների համապատասխան»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել պատվիրատուին՝

1. Չեղարկելու 02.12.2021թ. թիվ 3 արձանագրությունը,
2. Այն բոլոր չափաբաժինների մասով, որոնց համար մեր կողմից ներկայացվել են նվազագույն գնային առաջարկ և որտեղ առկա է մեր կողմից հայտով ներկայացված և ՀՀ–ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում ներառված դեղ, ընդունելու որպես հրավերի պահանջներին համապատասխան:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

2. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.12.2021թ. թիվ 09/3162 գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ուսումնասիրելով «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված տեղեկատվությունը հայտնում ենք, որ ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է հիմք ընդունելով հետևյալը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին, 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44 և 47-րդ չափաբաժինների մասով, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ -ն:

2. «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44 և 47-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերով սահմանվել է նաև «Դեղը ներառված է ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր)» պայմանը: Նշված պայմանի հիմք է հանդիսացել՝ ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին 02.05.2013թ.-ի թիվ 502-Ն որոշման պահանջները:

3. Հրավերով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքներ:

4. «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի նախնական հայտը չի ներառել ապրանքների համար առաջարկվող ապրանքային նշանին համապատասխանող արտադրողի անվանում: Մասնակցի կողմից հայտով ներկայացվել են միայն ապրանքի արտադրող երկրների անվանումները՝ ինչը հրավերով չի պահանջվել:

5. Գնահատող հանձնաժողովի 2021թ.-ի նոյեմբերի 23 նիստի արձանագրության 3-րդ կետով հստակ նկարագրվել են հրավերի պահանջների նկատմամբ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի հայտում առկա անհահամապատասխանությունները: Նույն նիստի արձանագրության 5-րդ կետով որոշվել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը այդ մասին տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Կից ներկայացվում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության պատճենը:

6. «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարը 2021թ.-ի նոյեմբերի 24-ին, համակարգի միջոցով ծանուցել է մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության մասին:

Կից ներկայացվում է ծանուցման պատճենը:



7. Սահմանված ժամկետում՝ 2021թ.-ի նոյեմբերի 25-ին «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված՝

● 2-րդ չափաբաժնի մասով՝ «Էլլարա» ապրանքային նշանը ներառված չէ «Ամիոդարոն» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:+

● 5-րդ չափաբաժնի մասով՝ «Միկրոգեն Իվանովսկայա» ապրանքային նշանը ներառված չէ «Ալբումին Բիոֆարմա» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 6-րդ չափաբաժնի մասով՝ «Պիրամալ էնթերպրայզիս լիմիտեդ» ապրանքային նշանը ներառված չէ «Իզոֆլուրան 100մլ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 7-րդ չափաբաժնի մասով՝ «Մեդիկամեն» ապրանքային նշանը ներառված չէ «Օմեպրազոլ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 8-րդ չափաբաժնի մասով՝ «Կրասֆարմ» ապրանքային նշանը ներառված չէ «Իմիպենեմ, ցիլաստատին 500մգ+500մգ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 13-րդ չափաբաժնի մասով՝ «Գրոտեքս» ապրանքային նշանը ներառված չէ «Զոնդան» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

●14-րդ չափաբաժնի մասով՝ «Օզոն» ապրանքային նշանը ներառված չէ «Ացիկլովիր 200մգ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 15-րդ չափաբաժնի մասով՝ «Ֆարմակոր» ապրանքային նշանը ներառված չէ «Դիոսմեկտիտ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 16-րդ չափաբաժնի մասով՝ «Աստերիա» ապրանքային նշանը ներառված չէ «Դեքսամեթազոն 1մգ/մլ, 5մլ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 25-րդ չափաբաժնի մասով՝ «Բորիսովսկի» ապրանքային նշանը ներառված չէ «Ատորվաստատին 40մգ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 33-րդ չափաբաժնի մասով՝ «գրոտեքս, Արմավիրսկայա բիոֆաբրիկա, մոսկովսկայ Էնդոկրիննայա» ապրանքային նշանները ներառված չեն «էպինեֆրին 1,82մգ/մլ, 1մլ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 34-րդ չափաբաժնի մասով՝ «Օզոն» ապրանքային նշանը ներառված չէ «Ֆամոտիդին 20մգ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 35-րդ չափաբաժնի մասով՝ «Յունիք» ապրանքային նշանը ներառված չէ «Յոհեքսոլ 100մլ/1» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 36-րդ չափաբաժնի մասով՝«Յունիք» ապրանքային նշանը ներառված չէ «Յոհեքսոլ 100մլ/1» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 40-րդ չափաբաժնի մասով՝«Օզոն, Ռաֆարմա, ԴԽՖ» ապրանքային նշանները ներառված չեն «Յոհեքսոլ 100մլ/2» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 44-րդ չափաբաժնի մասով՝«Նեոստիգմին Պրոզերիմ» ապրանքային նշանը ներառված չէ «Նեոստիգմին 0,5մգ/մլ, 1մլ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

● 47-րդ չափաբաժնի մասով՝ «վելֆարմ, Դալխիմ, ՄԿՖԿԱ» ապրանքային նշանները ներառված չեն «Դիֆենհիդրամին 10մգ/մլ, 1մլ» դեղամիջոցի համար դեղերի պետական գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների ցանկում:

8. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի (զ) պարբերության համաձայն՝ «հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)»:

Նույն կարգի 50-րդ կետի համաձայն՝ «ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է և ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի»:

«ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի «Հայտը ներկայացնելու կարգը» բաժնի 4.3 կետի համաձայն՝ «մասնակիցը հայտով ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)՝ համակարգի միջոցով: Ընդ որում մասնակիցը կարող է ներկայացնել մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքներ»:

9. Գնումների գործընթացի կազմակերպման կարգի վերոնշյալ նորմերից և հրավերով սահմանված պահանջից հետևում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից ապրանքի տեխնիկական բնութագիրը և հրավերով նախատեսված ապրանքային նշանը, ինչպես նաև արտադրողի անվանումը պետք է գնահատվեն որպես ապրանքի ամբողջական նկարագիր:

10. Հաշվի առնելով այն, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «էլեկտրոնային աճուրդ» համակարգով, գնահատող հանձնաժողովը չէր կարող մասնակցի հայտը գնահատել բավարար յուրաքանչյուր չափաբաժնի համար միայն դեղերի պետական

գրանցամատյանում գրանցված ապրանքային նշանների և արտադրող անվանումների մասով՝ կնքվող պայմանագրի նախագծում չներառելով գրանցամատյանում բացակայող անվանումները, քանի որ՝

● տվյալ որոշումը կհակասեր կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի (զ) պարբերության և 50-րդ կետի պահանջներին,

● «էլեկտրոանին աճուրդ» համակարգում պայամանգրի նախագիծը չի կարող ձևավորվել քարտուղարի կողմից, այն ձևավորվում է համակարգի կողմից ավտոմատ և պայմանագրի նախագծի մեջ ներառվում է մասնակցի բավարար գնահատված հայտով ապրանքի ամբողջական նկարագիրը, որը տվյալ պարագայում իր մեջ պարունակում է նաև դեղերի պետական գրանցամատյանում չգրանցված դեղեր: Նման պայմանագրի կնքումը կհակասի ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին 02.05.2013թ.-ի թիվ 502-Ն որոշման պահանջներին:

11. Բացի այդ, մասնակցիների կողմից հայտով մեկ ապրանքի համար մեկից ավելի ապրանքային նշան ներկայացնելու վերաբերյալ որոշակի պարզաբանումներ ստանալու նպատակով Համալսարանը գրավոր դիմել էր գնումների ոլորտը կարգավորող լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, որը պատասխան գրությամբ հայտնել է՝ եթե հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ապա դրանք կարող են լինել մեկից ավելին (որոնք ներառվելու էն կնքվելիք պայմանագրի նախագծում), եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշանների ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Կից ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրության պատճենը:

12. «Էլեկտրոնային աճուրդ» համակարգով, նման դեպքերում, մասնակցին ծանուցվող պայմանագրի նախագիծը ընթացակարգի քարտուղարի կողմից ձևավորելու հնարավորության վերաբերյալ Համալսարանը կրկին գրավոր դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն: Վերջինս պատասխան գրությամբ չի տվել «էլեկտրոնային աճուրդ» համակարգից դուրս քարտուղարի կողմից պայմանագիր ձևավորելու թույլտվություն: Կից

ներկայացվում են Համալսարանի գրության և ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրության պատճենները:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված, ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունների նկարագրության բացակայության վերաբերյալ:

Մասնակցի կողմից ներկայացված բողոքի 1-ին մասում նշված է, որ նա 24.11.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» գրություն: Նշված «գրությունը» ձևավորվում է Համակարգի կողմից ավտոմատ կերպով, երբ ընթացակարգի քարտուղարն ամփոփում է գնահատող հանձնաժողովի կողմից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների դիմում-հայտարարությունների գնահատումը, ինչը հնարավորություն է տալիս մասնակիցներին «գրության» մեջ առկա հղումով մուտք գործել Համակարգ և Համակարգում շտկել արձանագրված և մանրամասն նկարագրված անհամապատսխանությունները:

Ինչ վերաբերվում է Ընկերության զրպարտանքին այն մասին, որ Ընկերությունը պատշաճ չի ծանուցվել արձանագրված անհամապատասխանությունների մասին, հայտնում ենք, որ նախ, ծանուցումը, ինչպես և ինքն է փաստում, տեսել է էլեկտրոնային փոստում, և ընկերության աշխատակիցը ընդամենը պետք է մուտք գործեր Համակարգ ծանուցման մեջ նշված հղմամբ՝ անհամապատասխանություններին մանրամասն ծանոթանալու համար /փաստորեն Ընկերությունը ծանոթ չէ Համակարգից օգտվելու կարգին/, երկրորդ, արձանագրված անհամապատասխանություններով հանձնաժողովի նիստի 23.11.2021թ. թիվ 2 արձանագրությունը կցվել է Համակարգ՝ /նկար 1/ և հրապարակվել է տեղեկագրում՝ /նկար 2/, երրորդ, թեպետ այդպիսի օրենսդրական պահանջ չկա, արձանագրությունը ուղարկվել է Ընկերության՝ Համալսարանին հայտնի բոլոր էլեկտրոնային փոստի հասցեներին՝ /նկար 3, նկար 4/, և վերջինը, եթե Ընկերությունը չի ծանուցվել անհամապատասխանությունների մասին, ապա ի՞նչպես է իրականացրել շտկումները:

Նկար 1


e-AUCTION
Մրցույթի մանրամասներ
ԷԱՇՄՊԶԲ-2022/4-1-ԵՊԲՀ
USD 475.57
RUR 6.7
EUR 545.15
2021-11-12 09:16:41
2021-11-19 09:45:00
2021-11-24 14:52:23
2021-11-25 15:07:37
2021-11-25 15:08:04
2021-12-02 14:07:01
2021-12-14 16:18:57
2021-11-22 09:45:00
2021-11-18 09:45:00

Նկար 2


gnumner.am/hy/search/
ՆԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՐՈՆՈՒՄ
Բաժին-Շահերի բախման բացակայություն
«Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար Դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԷԱՇՄՊԶԲ-2022/4-1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի շահերի բախում
(Հրապարակված է 2021-11-24 16:05:33-ից անժամկետ)
Ծածկագիր-ԷԱՇՄՊԶԲ-2022/4-1-ԵՊԲՀ
Բաժին-Հանձնաժողովի նիստերի արձանագրություններ
«Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի կարիքների համար Դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԷԱՇՄՊԶԲ-2022/4-1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություն
(Հրապարակված է 2021-11-24 16:02:09-ից անժամկետ)
Ծածկագիր-ԷԱՇՄՊԶԲ-2022/4-1-ԵՊԲՀ
Բաժին-Պայմանագիր կնքելու մասին հայտարարություններ
Armeps
Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կարիքների համար ԷԱՇՄՊԶԲ-2022/4-1-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու մասին հայտարարություն
(Հրապարակված է 2021-11-24 14:50:05-ից անժամկետ)
Ծածկագիր-ԷԱՇՄՊԶԲ-2022/4-1-ԵՊԲՀ
Բաժին-Էլեկտրոնային աուկցիոնի հայտարարություն և հրավեր
Արխիվ
Armeps
Դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերում
(Հրապարակված է 2021-11-12 09:16:41-ից մինչև 2021-11-19 09:45:00 ժամը ներառյալ)

Նկար 3



Նկար 4



«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված անգործության ժամկետի անհամապատասխանության վերաբերյալ:

Ուսումնասիրելով «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից ներկայացված բողոքը այն մասով, որ Պատվիրատուի կողմից սահմանվել է անգործության ժամկետ նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 4-ը, հայտնում ենք, որ այն ահիմն է: Ընկերությունն ինքը փաստում է, որ 02.12.2021թ. ստացել է թիվ 3 արձանագրությունը, որի 4-րդ կետում հստակ նշված են ընտրված մասնակիցները ըստ չափաբաժինների և 5-րդ

կետում սահմանված է անգործության ժամկետ, հետևապես եթե նոյեմբերի 25-ին սահմանվեր անգործության ժամկետ, այն չէր վերասահմանվի դեկտեմբերի 2-ին:

Կից ներկայացվում է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության պատճենը:

Գնահատող հանձնաժողովի կողմից 02.12.2021թ. գնահատման նիստին զուգահեռ իրականացվել է Ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման գնահատումը նաև աճուրդների իրականացումն ապահովող համակարգում՝ /www.eauction.armeps.am/ կայքի միջոցով (այսուհետև՝ Համակարգ): Գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատումից հետո, քարտուղարը Համակարգում ամփոփել է գնահատումը, որից հետո Համակարգը ձևավորել և հրապարակել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը՝ այսինքն սահմանվել է անգործության ժամկետ: Ի ապացույց վերոգրյալի հայտնում ենք, որ հանձնաժողովի քարտուղարը Համակարգի մեջ պարտադիր մուտքագրում է գնահատող հանձնաժողովի նիստի համարը, որը և ներառված է պայմանագիր կնքելու որոշման հայտարարության մեջ՝ «դեկտեմբերի 2-ի թիվ 3 որոշմամբ», իսկ թե ինչու է տվյալ հայտարարության տեղեկագրում հրապարակման ժամկետը նշված նոյեմբերի 25, առաջարկում ենք հարցում կատարել Համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Այնուամենայնիվ, համակարգի կողմից անգործության նման ժամկետի սահմանումը ոչ մի կերպ չի սահմանափակել «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ըմկերության բողոք ներկայացնելու իր իրավունքը՝ իրական անգործության ժամկետում՝ 13.12.2021թ:

«ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամներին հասցեագրված «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերույթան մեղադրանքները անհիմն են, քանի որ հանձնաժողովի բոլոր անդամները մասնագիտությամբ դեղագետ են, և որպես նշվածի հիմնավորում կից ներկայացված են գնահատող հանձաժողովի անդամների մասնագիտությունը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Հաշվի առնելով վերոգրյալը և համալսարանի կողմից ներկայացրած փաստական տվյալները խնդրում եմ Ձեզ, «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերության բողոքը մերժել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.12.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր

ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի» մեջ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները. «Հայտով ներկայացված՝ N 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47-րդ չափաբաժինների մասով անհրաժեշտ է շտկել ապրանքային նշանները, ապրանքների արտադրողի անվանումը, նշելով ոչ թե երկրի, այլ յուրաքանչյուր չափաբաժնի համար հստակ արտադրող կազմակերպության անվանում և դրան համապատասխանող ապրանքային նշան»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են անհամապատասխանությունների շտկում բոլոր՝ N 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47-րդ չափաբաժինների մասով և որոշում կայացրել բոլոր չափաբաժինների անհամապատասխանությունների շտկումները անբավարար գնահատելու և Ընկերության

հայտը մերժելու վերաբերյալ՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ջիարջի» ՍՊԸ-ի 13.12.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 15.12.2021թ. թիվ 09/3162 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև

կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: ***<u>Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:</u>***

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի

ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Այսպես՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Ջիարջի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի» մեջ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները. «Հայտով ներկայացված՝ N 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47-րդ չափաբաժինների մասով անհրաժեշտ է շտկել ապրանքային նշանները, ապրանքների արտադրողի անվանումը, նշելով ոչ թե երկրի, այլ յուրաքանչյուր չափաբաժնի համար հստակ արտադրող կազմակերպության անվանում և դրան համապատասխանող ապրանքային նշան»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են անհամապատասխանությունների շտկում բոլոր՝ N 2, 5, 6, 7, 8, 13, 14, 15, 16, 16, 25, 29, 33, 34, 35, 36, 40, 44, 47-րդ չափաբաժինների մասով և որոշում կայացրել բոլոր չափաբաժինների անհամապատասխանությունների շտկումները անբավարար գնահատելու և Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը eauction.armeps.am համակարգի (հետայսու՝ Համակարգ) տեխնիկական սպասարկումն իրականացնող ընկերությանը՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին, ուղղված 17.12.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/20904-2021 գրությամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Ե՞րբ է Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը, տրամադրել ծանուցման բովանդակությունը և ծանուցման վերաբերյալ փաստաթուղթը:

2. 02.12.2021թ. կայացած գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունից հետո Ընկերությանն էլեկտրոնային եղանակով ներկայացված անգործության ժամկետի սկսելու մասին ծանուցման մեջ առկա անհամապատասխանությունը, այն է՝ սահմանվել է անգործության ժամկետի մեկնարկը 25.11.2021թ.,իսկ ավարտը 04.12.2021թ., առաջացել է պատվիրատուի գործողությունների, թե՞ համակարգի ավտոմատ գեներացման արդյունքում:

3. 02.12.2021թ. կայացած գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունից հետո տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը, սակայն որպես հրապարակման ամսաթիվ նշվել է 2021-11-24 14:50:05. ներկայացված խնդիրն առաջացել է պատվիրատուի գործողությունների, թե՞ համակարգի ավտոմատ գեներացման արդյունքում:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն 10.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի՝ պարոն Ներսիսյան, ի պատասխան Ձեր 18.12.2021 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/92 գրության տեղեկացնում ենք, որ մեր կողմից ուսումնասիրվել է eauction.armeps.am համակարգի տվյալների շտեմարանը: Հայտնում ենք Ձեզ «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ՋԻԱՐՋԻ» ՍՊ ընկերությանը պատվիրատուի կողմից անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, 24.12.2021 14:50-ին ուղարկվել է ծանուցում հետևյալ բովանդակաությամբ՝

<u>Հարգելի ՋԻԱՐՋԻ ՍՊԸ,</u>

<u>Դուք դիմել եք «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 41-րդ կետով և «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց. մեկ աշխատանքային օրով կասեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի նիստը և Համակարգի միջոցով այդ մասին տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել</u>

անհամապատասխանությունները: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով:

«ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին հայտարարության գեներացման ամսաթվի վերաբերյալ հայտնում ենք, որ կնքված պայմանագրի մասին հայտարարության փաստաթուղթը Համակարգում ավտոմատ գերներանում է միայն, երբ գնահատումը ամբողջությամբ ամփոփված է, նշված դեպքում փաստաթուղթը գեներացել է 02/12/2021թ. ժամը 14:01-ին, փաստաթղթում որոշման ընդունման օրն նշելով դեկտեմբերի 2, ***սակայն Համակարգի կողմից հրապարակման ժամկետը ինչպես նաև անգործության ժամկետի մեկնարկը տվյալ ընթացակարգի դեպքում սխալմամբ սահմանվել է 24.11.2021թ. ժամը 14:50-ին՝ առաջին գնահատման ամփոփման ժամկետը»:***

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների, մասնավորապես՝ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի 10.01.2021թ. գրության համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ պահանջները, ինչպես նաև իր իսկ կողմից կազմված հրավերով սահմանված պահանջները, այն է՝ ***մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները***, այսինքն՝ արձանագրելով անհամապատասխանություններ, Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ ընդհանրապես չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, որպիսի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Ընկերությունը զրկվել է գնումների

մասին ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքները լիարժեք իրացնելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով բարձրացված այն հանգամանքին, որ Պատվիրատուն թիվ 3 արձանագրությունը հրապարակել է դեկտեմբերի 2-ին, որից հետո միայն պետք է հայտարարեր անգործության ժամկետ, մինչդեռ՝ անգործության ժամկետի սկսելու մասին իր 02.12.2021թ-ի գրության մեջ անգործության ժամկետ է նշել նոյեմբերի 25-ին մինչև դեպտեմբերի 4-ը ընկած ժամանակահատվածը, ապա այս մասով «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի 10.01.2022թ. գրությամբ պարզաբանվել է, որ կնքված պայմանագրի մասին հայտարարության փաստաթուղթը Համակարգն ավտոմատ գեներացնում է միայն, երբ գնահատումն ամբողջությամբ ամփոփված է, նշված դեպքում փաստաթուղթը գեներացվել է 02.12.2021թ. ժամը 14:01-ին, փաստաթղթում որոշման ընդունման օրն նշելով դեկտեմբերի 2, ***սակայն Համակարգի կողմից հրապարակման ժամկետը ինչպես նաև անգործության ժամկետի մեկնարկը տվյալ ընթացակարգի դեպքում սխալմամբ սահմանվել է 24.11.2021թ. ժամը 14:50-ին՝ առաջին գնահատման ամփոփման ժամկետը:***

Հետևաբար՝ հարկ եմ համարում արձանագրել, որ սխալը տեղի է ունեցել ոչ թե Պատվիրատուի գործողությունների, այլ Համակարգի կողմից տվյալների սխալ գեներացման արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ջիարջի» ՍՊԸ-ի կողմից 13.12.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 02.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը:
2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**